01/10.1/6205-09
2009-09-23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Դավթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-685-25.08.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության (2002 թվականի փետրվարի 20-ի, ՀՕ - 308) օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում «ժե» բառից հետո լրացնել «ժը.1» բառը։

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի ընդհանուր տրամաբանությանը համապատասխան անհրաժեշտ է սահմանել, թե «ժը.1» ենթակետում սահմանված իրավասությունը ինչ բնույթի իրավական ակտով պետք է ընդունվի՝ նորմատիվ թե անհատական։ Քանի որ խոսքը վերաբերում է Հեռարձակման կարգավորող անկախ մարմնի անդամի թափուր տեղի ընտրության կարգին, որի մեջ սահմանվելու են դրույթներ, որոնք, ըստ էության, համապատասխանում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում տրված նորմատիվ իրավական ակտի

սահմանմանը /օրինակ՝ համընդհանուր բնույթը/, ապա ակտն իր բնույթով պետք է լինի նորմատիվ։